ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅՈՑ ԲՈՒՆ ԹՎԱԿԱՆԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՀԱՅԿՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Հայ ժողովուրդը, սկսած հնագույն ժամանակներից, տարբեր դարաշրջաններում օգտագործել է տարբեր «թվական»-ներ, այսինքն՝ տոմարներ։ Այդ թվականների ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ հայագետ-տոմարագետներ, որոնք և ստեղծել են հայագիտության ճյուղերից մեկը՝ հայկական տոմարագիտությունը, հայոց թվականների գիտական պատմությամբ հանդերձ։ Մինչսովետական շրջանի այդ կարգի լավագույն ուսումնասիրությունները պատկանում են Է. Դյուլորիեին[1] և Ղ. Ալիշանին[2], որոնց աշխատությունները հիմք և ուղեցույց են հանդիսացել հետագայի տոմարագիտական հետազոտությունների համար։ Տոմարագիտական ուսումնասիրությունները մեծ ծավալ ստացան և նոր, ավելի բարձր մակարդակի հասցվեցին սովետահայ մաթեմատիկոս-տոմարագետներ Բ. Ե. Թումանյանի[3] և Հ. Ս. Բադալյանի[4] հետազոտություններով, ինչպես և Մատենադարանի մի շարք տոմարական ձեռագրերի հրատարակություններով[5], որոնք հսկայական նյութ են մատակարարում հայոց թվականների պատմության ուսումնասիրության համար։ Այդ նյութերի հետազոտությամբ հայ ժողովրդի օգտագործած դանազան տոմարների պատմությունը հիմնականում ներկայացվել է իր ամբողջության մեջ, և միայն առանձին խնդիրներ կան, որոնք դեռևս իրենց սպառիչ լուծումը չեն ստացել։ Այդպիսի խնդիրներից մեկն է հին հայկական, այսպես կոչված, «Բուն հայկական թվականի» սկզբնավորման ժամանակի որոշումը, որին և նվիրված է այս հոդվածը։

Որպեսզի մեր քննարկած հարցերն ու առաջարկվող պատասխանները դյուրությամբ ընկալվեն ընթերցողի կողմից, անհրաժեշտ ենք համարում համառոտակի տեղեկություններ տալ այդ տոմարի կառուցվածքի մասին։ Հին հայկական տոմարը, որ այսուհետև համառոտելով անվանելու ենք Բուն թվական, *շարժական արեգակնային օրացույցների թվին է պատկանում և պարունակում է տարեկան 365 օր. տարին բաղկացած է 12 երեսնօրյա ամիսներից և հինգ օր պարունակող մեկ՝ հավելյալ «ամսից»։ Ամիսների անվանումներն են. Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից, Հավելյաց։ Ամիսները շաբաթների չեն բաժանվել. ամսվա 30 օրերն ունեցել են իրենց անունները (1. Արեգ, 2. Հրատ, 3. Արամ, 4. Մարգար, 5. Ահրանք, 6. Մազդեզ և այլն)[6]։ Հավելյաց ամսի օրերը կոչվել են. Լուծ, Եղջերու, Փառազնոտ, Արտախուր, Ծկրավորի։ Հայերը յոթնօրյա շաբաթվա գործածությանն են անցել քրիստոնեություն ընդունելուց հետո և, ինչ-*

---

[1] M. Édouard Dulaurier, Recherches sur la chronologie arménienne technique et historique, Paris, 1859.

[2] Ղ. Ալիշան, Հուշիկք հայրենյաց հայոց, Վենետիկ, 1869։

[3] Բ. Ե. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, Ա, 1964, Բ, 1968, նույնի՝ Տոմարի պատմություն, Երևան, 1972։

[4] Հ. Ս. Բադալյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970։

[5] Ա. Ա. Արրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, նույնի՝ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956։

[6] Ամսվա օրերի անունների ամբողջական ցուցակը տե՛ս Հ. Ս. Բադալյան, նշվ. աշխ., էջ 100, Բ. Ե. Թումանյան, Տոմարի պատմություն, էջ 42։

պես ցույց են տվել տոմարագետները, հետևել են հրեաներին։ Վաղադույն ժամանակներից հայերը օրը բաժանել են 24 ժամերի (12 ցերեկային և 12 գիշերային), որոնք նույնպես ունեցել են իրենց անվանումները[7]։ Աստղագիտական ճշգրիտ հաշվումներով տարվա տևողությունն է 365 օր, 5 ժամ, 48 րոպե, 48 վայրկյան (365,2422 միջին արեգակնային օր). կուսորակներից խուսափելու համար հուլյան տոմարում հաշվվել է 365 օր և 6 ժամ, որը և 4 տարվա ընթացքում զումարվելով դառնում է 24 ժամ=1 օր, ուստի և 4 տարիներից 3-ը ունենում են 365, մեկը՝ նահանջ տարին, 366 օր (4 տարին հավասար է 1461 օրվա)։

Ինչպես արդեն ասվեց, հայոց Բուն թվականի տարին ունեցել է 365 օր (նահանջ տարի չի եղել), որով չորս տարվա օրերի թիվն է 1460, մեկ օրով պակաս հուլյան տոմարի մեկ քառամյակի օրերի թվից։ Այս մեկ օրվա տարբերությունն էլ, ահա, առաջ է բերում մեր Բուն թվականի ամսաթվերի և հուլյան տոմարի ամսաթվերի համապատասխանության փոփոխությունը, որը և ժամանակի ընթացքում հանգեցնում է ամիսների համապատասխանության անընդհատական փոփոխության։ Այսպես. ենթադրենք, թե տվյալ տարում հայոց տարվա առաջին օրը՝ նավասարդի 1-ը, համընկնում է հուլյան տոմարի մայիսի 1-ին. այդ համապատասխանությունը կպահպանվի մեկ քառամյակ՝ սկսած նահանջ տարվանից. չորս տարուց հետո, հաջորդ նահանջ տարում, մեր նավասարդի 1-ը կհամընկնի ապրիլի 30-ին, մյուս նահանջ տարում՝ ապրիլի 29-ին և այլն։ Այսպիսով, մեր նավասարդի 1-ը յուրաքանչյուր քառամյակում մեկ օրով առաջ է շարժվում, և դրան համապատասխան էլ փոխվում են մեր և հուլյան տոմարի ամսաթվերի ու ամիսների համապատասխանությունները։ Մեկ քառամյակի ընթացքում մեր բուն տոմարի այդ մեկ օրվա պակասը կուտակվելով դառնում է 365 օր, այսինքն մեկ տարի, հուլյան տոմարի 1460 տարում (365 օր×4 տարով=1460), ուրեմն հուլյան տոմարի 1460 տարին հավասար է մեր տոմարի 1461 տարվան։ Հասկանալի է, որ տարբերության մեկ տարին լրանալուց հետո մեր նավասարդի 1-ը կրկին համընկնում է հուլյան տոմարի ա՛յն ամսվա ա՛յն օրվան, որին համապատասխանել էր 1460 տարվա շրջանի առաջին թվականին։ Վերը բերված օրինակի մեջ մենք ընդունեցինք նավասարդի 1=մայիսի 1 համապատասխանությունը, ուստի և 1460 տարվա շրջանը լրանալուց հետո կունենանք նույն համապատասխանությունը։ Այս 1460-ամյա շրջանը աստղագիտական գրականության մեջ սովորաբար կոչում են Սոթիսի շրջան, հայ տոմարագիտության մեջ՝ Հայկայ շրջան, հնում՝ շնկան (Շնիկ աստղի) շրջան, իսկ շրջանի սկիզբը, այսինքն սկզբնական համապատասխանության վերադարձը (մեր օրինակում՝ մայիսի 1=նավ. 1)՝ նահանջից նահանջ, աստղագիտական տերմինով՝ ապոկատաստաս[8]։

Այս նախնական գիտելիքներն ունենալով, կարող ենք որոշել Բուն տոմարի 1460 տարիների ամիսների և ամսաթվերի համապատասխանությունը հուլյան տոմարի ամիսներին և ամսաթվերին, եթե դիտենք հուլյան տոմարի որևէ թվականի որևէ ամսաթվի զուգադիպությունը մեր շարժական տարվա որևէ ամսվա այսինչ օրվան։ Իսկ այդպիսի զուգադիպության հաստատուն տվյալներ մեզ հայտնի են։ Այսպես. հայտնի է, որ հուլյան տոմարի 428 թվականին մեր նավասարդի 1-ը համապատասխանել է օգոստոսի 11-ին. այս տվյալը հաղորդում են մեր մատենագիրները, և տոմարագետների ուսումնասիրությունները հաստատել են, որ դա ստույգ տվյալ է։ Այդ մեկ տվյալի հիման վրա կարող ենք որոշել երկու տոմարների ցանկացած թվականի ցանկացած օրվա համապատասխանությունը հետևյալ կանոնների համաձայն։ Եթե մեր ցանկացած

---

7 Հ. Ս. Բաղալյան, նշվ. աշխ., էջ 105—106

8 Հունարեն ἀποκατάστασις 1. վերականգնում, 2. վերադարձ, 3. ձևնում, նվիրում, մատուցում։

ամսաթվի տարին նախորդել է հուլյան 428 թվականին, ապա 428-ից պետք է հանել այդ թվականը, տարբերությունը բաժանել 4-ի և ստացված քանորդը գումարել օգոստոսի 11-ին, որով կստանանք այդ թվականի նավասարդի 1-ի զուգադիպությունը հուլյան տոմարի համապատասխան ամսաթվին։ Օրինակ, որոշենք հուլյան տոմարի 300, 352, 400 թվականների նավասարդի 1-ի օրերը ըստ հուլյան տոմարի։ 1) 428—300=128; 128:4=32; օգոստոսի 11+32=սեպտեմբերի 12։ 2) (428—352):4=19; օգոստոսի 11+19=օգոստոսի 30։ 3) (428—400):4=7; օգոստոսի 11+7=օգոստոսի 18։ Այսպիսով. 300 թվականին հայոց նավասարդի 1-ը համընկել է սեպտեմբերի 12-ին, 352 թվականին՝ օգոստոսի 30-ին, 400 թվականին՝ օգոստոսի 18-ին։ Եթե հուլյան տոմարի որոնելի մեր համապատասխանության թվականը 428-ից հետո է (ուստի և՝ 428-ից մեծ է), ապա այդ թվականից պետք է հանել 428, տարբերությունը բաժանել 4-ի և քանորդը հանել օգոստոսի 11-ից։ Օրինակի համար որոշենք 448, 500, 552 թվականների նավասարդի 1-ի օրը՝ հուլյան տոմարով։ 1)448—428=20; 20:4=5։ Օգոստոսի 11-ից հանենք 5, կստանանք օգոստոսի 6։ 2) 500—428=72; 72:4=18։ Օգոստոսի 11—18=հուլիսի 24։ 3) 552—428=124; 124:4=31։ Օգոստոսի 11—31=հուլիսի 11։ Ուրեմն 448 թվականին հայոց նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 6-ին, 500 թվականին՝ հուլիսի 24-ին, 552 թվականին՝ հուլիսի 11-ին։ Այս բոլոր օրինակներում մենք վերցրել ենք այնպիսի թվականներ, որոնք առանց մնացորդի բաժանվում են 4-ի, բայց հնարավոր է, որ տրված թվականն առանց մնացորդի չբաժանվի։ Այդ դեպքում պետք է դեն նետել մնացորդը և հաշվարկը կատարել նախորդող (կամ 428-ի և տրված թվականի տարբերությանը նախորդող) այն թվի համար, որը առանց մնացորդի բաժանվում է 4-ի։ Այսպես, ընդունենք, թե պետք է որոշել 555 թվականի նավասարդի 1-ի օրը. 555:4=138 և 3 մնացորդ կամ 555—428=127; 127:4=31 և 3 մնացորդ, նշանակում է 555-ից պետք է հանել այդ մնացորդը և վերցնել նախորդող այն թիվը, որ առանց մնացորդի բաժանվում է 4-ի. այդ թիվն է 552, իսկ 552—428=124, որ նույնպես առանց մնացորդի է բաժանվում 4-ի։ Ավելի պարզեցված ձևով կարելի է ասել՝ տվյալ թվականի և 428-ի տարբերությունից պետք է անտեսել մնացորդը և օգոստոսի 11-ից հանել քանորդը. օրինակ՝(555—428):4=31 և 3 մնացորդ. օգոստոսի 11-ից հանած 31 օր=հուլիսի 11։ 353 թվականի համար՝ (428—353) :4=18 և 3 մնացորդ, առանց մնացորդի բաժանվող նախորդ թվականն է 352, ուստի և՝ (428—352):4=19, օգոստոսի 11+19=օգոստոսի 30։ Այսպես պետք է վարվել հետևյալ պարզ պատճառով. հուլյան տոմարի մեջ նահանջ տարի է յուրաքանչյուր չորրորդ տարին, որ ունի 366 օր (փետրվարը՝ 29 օր). ըստ այդմ՝ հայոց շարժական և հուլյան անշարժ տոմարների համապատասխանության փոփոխությունը տեղի է ունենում յուրաքանչյուր չորրորդ տարում և հաջորդ երեք տարիներում այդ փոփոխությամբ ստեղծված համապատասխանությունը պահպանվում է. այսպես՝ 428 թվականից հայոց նավասարդի 1=օգոստոսի 11 համապատասխանությունը պահպանվել է 429, 430, 431 թվականներին և փոխվել 432 թվականին (նավասարդի 1=օգոստոսի 10) և այդպես շարունակ։ Ըստ այսմ, եթե հուլյան օրացույցով նահանջ տարին քառամյակի վերջին՝ 4-րդ տարին է, ապա՝ հայոց շարժական տարվա տարեսկզբի (և տարվա բոլոր օրերի) ու հուլյան տոմարի տվյալ օրվա համապատասխանությունների համակարգի մեջ քառամյակի առաջին տարին է նահանջ տարին կամ այլ կերպ՝ այն թվականը, որ առանց մնացորդի բաժանվում է չորսի։ Վերը բերված օրինակների (300, 352, 400, 448, 500, 552 թթ.) համապատասխանությունները պահպանվել են նաև հաջորդ երեք տարիներում՝ 301, 302, 303; 353, 354, 355; 401, 402, 403 և այլն։

Նշած տվյալների վրա հենվելով և համապատասխան հաշվումներ կատարելով՝ հայ տոմարագիտության մասնագետները (Դյուլորիե, Հ. Բաղալյան, Ֆ. Թումանյան և այլք) կազմել են հայոց տոմարի ամսամուտերի և հուլյան

տոմարի համապատասխան օրերի համեմատական տախտակները՝ ինչպես Բուն թվականի, այնպես էլ Հայոց Մեծ թվականի համար[9]։

Հասկանալի է, որ մեր առաջադրած խնդրի լուծումն էլ պետք է հիմնվի եղած տվյալների վրա, իսկ այդ հիմքի վրա համապատասխան հաշվումներ կատարելու համար անհրաժեշտ է ամենից առաջ որոշել, թե հայոց Բուն թվականի ամանորը, այսինքն՝ նավասարդի 1-ը, հուլյան տոմարի ո՞ր ամսվա ո՞ր օրվան է համապատասխանել Բուն տոմարի սկզբնավորման ժամանակ։ Հայտնի է, որ տարբեր ժողովուրդներ տարին սկսել են տարվա տարբեր ամիսներից։ Այսպես, եգիպտացիների տարեսկիզբը եղել է օգոստոսի 29-ին, հռոմեացիները նախապես տասնամսյա տարվա առաջին ամիսն են համարել մարտը, և միայն հետագայում՝ ավելացնելով երկու ամիս ևս (հունվար և փետրվար), տարվա սկիզբը փոխադրել են հունվար ամսին. պարսկական հին օրացույցով տարվա սկիզբը եղել է գարնանային (մարտյան) գիշերահավասարի օրը և այլն։ Իսկ ո՞ր ամսին է եղել հայոց օրացուցային տարվա սկիզբը։ Դյուլորիեն բերում է մեր բազմաթիվ մատենագիրների վկայություններն այն մասին, որ հայոց նավասարդը համապատասխանում է պարսից նովրուզին (հին պարսկական տարվա առաջին ամսվան), ինչպես և մեր միջնադարյան տոմարագետների վկայությունները տարեմուտի մասին, և եզրակացնում, թե հայոց տարեմուտը՝ նավասարդ ամսի 1-ը, եղել է գարնանային (մարտյան) գիշերահավասարի օրը։ Այնուհետև, հենվելով իր այն դրույթի վրա, որ հայոց Բուն թվականի կառուցվածքը հար և նման է հին պարսկական տոմարին, հայոց տոմարի սկզբնավորումը հանգեցնում է պարսկական տոմարի սկզբնավորման դարաշրջանին։ Նա հատկապես շեշտում է, որ դա տեղի է ունեցել Զրադաշտի գործունեության ժամանակներում, և հեղինակն էլ Զրադաշտն է[10]։ Գինցելն իր աշխատության «Ժամանակի հաշվումը հայերի մոտ» գլխում, հենվելով Դյուլորիեի ուսումնասիրության վրա, գրում է. «Հայերը շարժական տոմարն ստացել են պարսիկներից, ըստ Դյուլորիեի Զրադաշտի ուսմունքի սկզբնավորման ժամանակներում (VII դար)։ Այդ չափազանց վաղ ժամանակն ընդունելուց ավելի հավանական պետք է լինի այն կարծիքը, ըստ որի շարժական տարին, Քրիստոսից առաջ 488 թվականին, Դարեհի ժամանակ է մուտք գործել միաժամանակ Իրան, և նրա գաղութները՝ Հայաստան ու Կապադովկիա»[11]։

Ինչպես պարզ կերպով հասկացվում է, Գինցելը, ընդունելով Դյուլորիեի կարծիքը հայոց շարժական տոմարի մասին, իր վարկածն է առաջ քաշում, գտնելով, որ ինչպես պարսիկները, այնպես էլ հայերն ու կապադովկիացիներն ընդունել են շարժական տոմարը միաժամանակ, ըստ որում այդ էլ ժամանակագրվում է Դարեհի թագավորության վերջին տարիներով (Դարեհը թագավորել է մինչև մ. թ. ա. 486 թ.)։

Հայոց տարեմուտի խնդրի հանգամանալից ուսումնասիրությամբ զբաղվել է Ղ. Ալիշանը։ Նախքան առաջադրված հարցին պատասխանելը, նա հանգամանորեն խոսում է հաստատուն (կայուն) և շարժական օրացույցների մասին, բացատրում Բուն թվականի, որպես շարժական օրացույցի, կառուցվածքը, ապա անդրադառնում այն հարցին, թե հայերը նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջաններում, մինչև 532-ամյա (ՇԼԲ) տոնացույց-տոմարը գործադրության մեջ դնելը, միայն շարժական օրացո՞ւյց են ունեցել, թե դրա հետ միաժամանակ օգտագործել են նաև հաստատուն տոմար։ Նրա քննությունների եզրակացությունն այն է, թե հայերը շարժական տոմարից բացի

---

[9] Dulaurier, նշվ. աշխ., էջ 383—389, Բ. Ե. Բուդանյան, Տոմարի պատմություն, էջ 51—112, նույնի՝ Հայոց և հռոմեական տոմարների զուգակցությունը 8—552 թ. համար («Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև ԲԵՀ), 1977, № 3, էջ 39—62), Հ. Ս. Բաղալյան, նշվ. աշխ., էջ 314—434։

[10] Dulaurier, նշվ. աշխ. էջ 1—17։

[11] F. K. Ginzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie: Das Zeitrechnungsweise der Völker, III B., Leipzig, 1914, S. 314.

անհրաժեշտաբար պետք է ունեցած լինեին նաև հաստատուն տոմար։ Որպես այդ եզրակացության հիմնավորում նա գրում է. «Գարնանամուտն՝ որ հիմա մեհեկանի կամ արեգի մեջ կուգա, ատեն մ'ալ ահկի ամիսը կուգա, ատեն մը քաղոցի և այլն, ամեն կետ ամեն ամսո ամեն օրվան կու հանդիպին զանազան տարիներ։ Ասով երկրագործաց և նմանյաց արվեստից շփոթություն կըլլա, որ օր ընելիքնին չեն գիտնար, և ինքն իրեն հարկ կըլլա, որ հաստատուն տոմար կամ օրացույց մը փնտրեն։ Նույնպես և եկեղեցական տարին այլ հաստատուն տոմար մը կուզե անհրաժեշտ, վասնզի ինքն այլ երկրագործի և աստեղաբաշխի պես, և այլ ավելի, տարվույն ամեն մեկ օրը իմանալի երկնից մեկ մեկ կետին՝ այսինքն հիշատակի հետ՝ կապած է։ և դարձյալ կուզե, որ այս կետերն այլ արեգակնային կետերուն հարմարցընե, որպեզի անմոռաց և անշփոթ կատարե իր գործը... Այդ եթե այս հիշատակներս մեր հայոց անհաստատ տոմարին օրերուն վրա հաստատեր և ըստ այնմ տոներ, ի՞նչ կըլլար.— օր մը Ծնունդը ձմռան խոցը կու տոնեինք, օր մ'այլ ամառուան տաքերուն... ըստ այսմ ամեն տոներ և հիշատակներ այլ անդադար և անպատճառ կու փոփոխեին։ Ոչ ոք հանձն կառնու այս բանս. տեղ մը և եկեղեցի մ'այլ չկա՝ որ հանձն առած ըլլան։ Լսել է որ շարժուն և անհաստատուն տոմար ունեցողք այլ՝ այս բանիս համար հաստատուն կերպ մը տոմար մը բռնած և ընդունած են։ Նույնպես այլ երկրագործության և ուրիշ կարևոր արհեստից և քաղաքական կարգաց և հանգիսից համար՝ պետք է որ հաստատուն տոմար մ'այլ ունեցած ըլլան այն ամեն ազգք և ժողովուրդք, որք չափավոր քաղաքակրթություն մ'ունեցեր են, ինչպես մեր հայոց ազգն այլ՝ շատ դարերե առաջ։ Ուրեմն մեր ազգն այլ իր շարժուն քաղաքական տոմարեն զատ՝ անշարժ, հաստատուն և հին տոմար մ'ունեցեր է»[12]։ Այս դատողությունները միանգամայն ճիշտ են, ուստի և անխուսափելի է այն ենթադրությունը, ըստ որի հայերն էլ, ուրիշ ժողովուրդների նման, պետք է ինչ-որ եղանակով կարողանային պահպանել կրոնական տոների զոնե հարաբերականորեն կայուն կամ հաստատուն ժամանակը, ասենք՝ գարնանային տոները՝ գարնան, ամառային տոները՝ ամռան, աշնանայինը՝ աշնան և ձմեռայինը՝ ձմռան ամիսներին։ Թե ինչ եղանակով են գեթ մոտավոր կերպով օրացուցային տոները հաստատուն դարձրել, հայտնի չէ և այստեղ այդ խնդրով չենք զբաղվի, այդ մասին կխոսենք ստորև. կբավականանանք միայն հավաստելով, որ Ղ. Ալիշանն ընդունում է Բուն հայոց թվականի երկու տարբերակ՝ շարժական և հաստատուն։ Այնուհետև նա անցնում է հայոց Բուն թվականի սկիզբը գտնելուն. այդ նպատակով նա որպես ելակետ ընդունում է 428 թվականի հայոց և հուլյան տոմարների համապատասխանությունը՝ հայոց նավասարդի 1=հուլյան օգոստոսի 11։ Որպես ապացույց այդ համապատասխանության, նա հիշում է նաև հայոց Մեծ թվականի՝ Շիրակացու կազմած 532 տարվա պարբերաշրջանի սկիզբը, այն է՝ հուլյան 552 թվականի նավասարդի 1=հուլիսի 11 համապատասխանությունը, որ ճշգրտորեն ստացվում է նաև պարզ թվաբանական հաշվարկով, այսպես՝ 552 թվականից հանած 428 թվականը=124 տարվա. 124:4=31 օր, և քանի որ 428 թվականին նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ին, ապա օգոստոսի 11-ից հանելով 31 օր, կստանանք ճիշտ ու ճիշտ նավասարդի 1=հուլիսի 11 համապատասխանությունը։ Վերջապես, նա իբրև կռվան բերում է նաև այն փաստը, որ Հովհաննես Իմաստասերը (Սարկավագը) իր անշարժ տոմարի («Սարկավագաղիր տոմար հայոց») համար իբրև տարեսկիզբ (այսինքն՝ նավասարդի 1-ն) է ընդունել օգոստոսի 11-ը, թեև իր տոմարի առաջին տարում (1084 թ.) նավասարդի 1-ը համապատասխանել է փետրվարի 29-ին։ Ահա, այս բոլորի հիման վրա էլ Ղ. Ալիշանը հանդում է այն եզրակացության, որ իբրև Հայկյան շրջանի դարագլուխ կամ այլ կերպ՝ հայոց Բուն թվականի նահանջից նահանջի (ապոկատաստասի) տարի պետք է ընդունել 428 թվականը, որով և Բուն թվականի առաջին տարվա տարեսկիզբը՝ նավասարդի 1-ն ընկնում է օգոստոսի 11-ին։ Այդպես ընդունելուց հետո արդեն մնում է թվաբանական պարզ հաշվումներով

12 Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 83—84։

դեպի ետ գնալ և գտնել նախորդ դարաշրջանների (1460-ամյա շրջանների) սկիզբը. այսպես՝ մ. թ. 428 թվականից հանած 1460 տարի, հավասար է մ. թ. ա. 1032 թ., 1032+1460=մ. թ. ա. 2492 թվական։ Այս էլ, ահա, Ղ. Ալիշանն ընդունում է որպես Հայոց Բուն թվականի սկիզբ։ Ըստ այսմ՝ Հայկյան առաջին շրջանն սկսվել է մ. թ. ա. 2492 թվականին, երկրորդը՝ մ. թ. ա. 1032 թվականին, երրորդը՝ մ. թ. 428 թվականին, չորրորդը՝ 1888 թվականին, այժմ (1983 թ.) 4-րդ շրջանի 95-րդ տարին է, կամ Բուն թվականի սկզբից հաշված՝ Հայոց 4475 թվականը։ Այսպես որոշելով հին Հայոց շարժական տոմարի սկիզբը, Ղ. Ալիշանն անդրադառնում է նաև հաստատուն տոմարի խնդրին և գրում. «Ուրիշ հին գիտուն ազգաց պես երկու տարի ունեին, մեկն քաղաքական, մյուսն արքազան՝ որ էր հաստատուն, և անտարակույս ասոր սկիզբն էր հինդ ամսով մ'առաջ, արեգ ամսեն սկսելով, որուն անունն կու նշանակե զարև և կուսկսի բուն արեգակնային ըսվելու վայելուչ օրեն, այսինքն գարնանամուտեն (ի 9—21 մարտի). և ասով այլ նավասարդի գլուխն կամ քաղաքական տարեմուտն՝ նույնպես ճիշտ օգոստոսի 11-ին (23-ին.—նոր տոմարով.—Է. Ա.) կու հանդիպի»[13]։ Այս հարցում էլ նա, ինչպես կարող ենք համոզվել, որպես ելակետ է ընդունում 428 թվականի համապատասխանությունը։ Այսպես. արեգը մեր 8-րդ ամիսն է, ուստի և արեգի 1-ից (ներառյալ) մինչև տարեվերջը լինում է 155 օր (5 լրիվ ամիս՝ 30-ական օրով=150 օր+հավելյաց 5 օրը=155 օր), օգոստոսի 11-ից (=նավասարդի 1) հանած 155 օր՝ կհասնենք մարտի 9-ին։ Հետևաբար, 428 թվականին արեգի 1-ը համընկել է մարտի 9-ին, նավասարդի 1-ը՝ օգոստոսի 11-ին։ Այս է նկատի ունեցել Ղ. Ալիշանը, որ գարնանամուտի օրը համարել է մարտի 9-ը (=21-ը՝ նոր տոմարով)։ Ինքնին հասկանալի է, որ եթե 428 թվականին՝ Հայկյան շրջանի առաջին տարում, արեգի 1-ը համընկել է մարտի 9-ին, ապա նախորդ երկու 1460-ամյա շրջանների առաջին տարում էլ (մ. թ. ա. 1032 և 2492) նույն համապատասխանությունը պետք է լիներ։

Հաստատելու համար, որ Բուն հայկական թվականի իր որոշած սկիզբը՝ մ. թ. ա. 2492 թվականը, ճշմարիտ է, Ղ. Ալիշանը դիմում է նաև այլ փաստարկների։ Հենվելով հին տոմարագիրների և հայամավուրքների վրա, որոնց գրածների համաձայն բաբելոնյան խառնաշփոթությունից հետո նահապետները պատվիրել են՝ Բաբելոնից իրենց երկիրը վերադառնալու օրը տոնել ամեն տարի, նա գրում է. «Մեր Հայկ Նահապետն ալ, կըսեն, մտավ Այրարատ աշխարհքը կամ իր Թորգոմա հորը բնակած երկիրը՝ օգոստոսի 11—23ին, և հրամայեց նույն օրը տարվույն սկիզբն սեպվի։ Կու հաստատեն դարձյալ, թե այս դյուցազնս առաջին եղավ տարեցույց տալու իր նորածին ազգին, զոր և կուպահե մեր ազգն մասամբ անփոփոխ, ինչպես որ իրեն ավանդվեցավ այն նախնական դարերուն մեջ»[14]։ Վերջապես, այս բոլորին ավելացնում է նաև այն, որ օտար ժամանակագրություններն էլ Հայկի և Բելի պատերազմի համար նույն թվականն են նշում. «Ափրիկանոս և Եվսեբիոս իրենց մանրամասն թիվերովը Բելա երկու շար թագավորաց կու դնեն՝ արաբացվոց և քաղդեացվոց, 440 տարի և ութ ամիս թագավորաց, իրենց տարիովը, որ էր 360 օր, որով 440 տարի և ութ ամիս կըլլա 435 տարի և 5 ամիս. արդ 435+2057=2492, որ է մեր Հայկա թվականն»[15]։

Ղ. Ալիշանի այս տեսությունը լայն տարածում է գտել հայերի մեջ։ Ամենից առաջ Հայկյան թվականի (=Բուն թվականի) սկիզբը՝ 2492 թվականը, ընդունել է հայ լուսավորչական եկեղեցին, և Էջմիածնի օրացույցում մինչև այժմ էլ մեր թվարկության տարեթվի հետ զուգահեռ տրվում է նաև հայոց Բուն թվականը՝ ըստ Ղ. Ալիշանի։ Այդ տեսությունն ընդունել են նաև XIX դ. հայ տոմարագետները. օրինակ՝ Գ. Աղանյանցը գրում է. «Որովհետև Հայկա թվականը

---

13 Նույն տեղում, էջ 88։ Ինչպես մարտի 9—21, այնպես էլ օգոստոսի 21—23 համապատասխանության մեջ առաջինը հուլյան (հին) տոմարով է, երկրորդը՝ Գրիգորյան (նոր)։

14 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 94—95։

15 Նույն տեղում, էջ 95։

սկիզբն է առել Քրիստոսից 2492 տարի առաջ, ուստի առաջին հանդիպումը (նահանջից նահանջը.—է. Ա.) եղած է 1460 տարի հետո, այն է 2492—1460=1032 թվին նախքան Քրիստոս Հայկազանց Պերճ երկրորդի ազգապետության և Դավիթ մարգարեի թագավորության օրերում։ Երկրորդ հանդիպումը եղավ Քրիստոսի 428 թվականին, ...երրորդ զուգադիպումը տեղի ունեցավ 1888 թվի օգոստոսի 11-ին հինգշաբթի օրը։ Իսկ չորրորդ հանդիպումը կլինի Հայկա 5840 և փրկչական 3348 թվին»[16]։ Նույն աշխատության 2-րդ հրատարակության մեջ էլ Գ. Ադանյանցը այդ բանը կրկնում է, ավելացնելով, որ դրքի հրատարակության տարում (1894 թ.) Բուն հայոց 4386 թվականն է, որով Բուն թվականի սկիզբը լինում է մ. թ. առաջ 2492-ը (4386—1894=2492)։ Ավելորդ ենք համարում թվարկել մինչսովետական շրջանի այն բոլոր տոմարագետներին, որոնք ընդունել են Ղ. Ալիշանի կարծիքը, և անցնում ենք սովետական շրջանի տոմարագետներին։ Մեր երկու մաթեմատիկոս-տոմարագետները, Բ. Թումանյանը և Հ. Բաղալյանը, որոնք գրել են հայ տոմարների պատմություն, Բուն թվականի սկզբնավորման մասին որոշակի կարծիք չեն արտահայտել։ Բ. Թումանյանն իր աշխատություններում[17] մեջ նշում է Ալիշանի կարծիքը ընդունողներից մի քանիսին, բայց առանց քննարկման առարկա դարձնելու և ընդունելու կամ մերժելու։ Հ. Բաղալյանը նույնպես մանրամասնորեն խոսում է Ալիշանի կարծիքի մասին, բերում նրա փաստարկները՝ առանց որևէ հերքման կամ հաստատման, սակայն, ըստ երևույթին, հեղինակը լռությամբ ընդունում է այդ կարծիքը, որ կռահվում է նրա մի ենթադրությունից. «Որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ նախքան արեգակնային օրացույցին անցնելը, հայերը ունեցել են լուսնային օրացույց. մի կարծիք, որի հետ համամիտ չենք։ Մեր կարծիքով հայերը սկզբից ևեթ գործ են ունեցել արեգակնային օրացույցի հետ»[18]։ Լ. Սեմյոնովը հատուկ քննության առարկա դարձնելով հայկական տոմարի սկզբնավորման հարցը՝ այն եզրակացության է հանգել, որ Հայկյան շրջանն սկսվել է մ. թ. ա. 2494 թվականից, բայց հայերն այդ արեգակնային տոմարն սկսել են օգտագործել մ. թ. ա. 460 թվականից[19]։ Վերջապես, պատմաբան Ա. Գ. Աբրահամյանը, որ հայոց տոմարների լավագույն մասնագետներից էր, իր մահվանից մեկ տարի առաջ լույս տեսած աշխատության մեջ մանրամասնորեն շարադրում է Ղ. Ալիշանի կարծիքը, ավելացնելով, սակայն, որ «Ալիշանի և Սեմյոնովի կարծիքները, մեր կարծիքով, ընդունելի համարել չի կարելի»[20]։

Այսպես, ուրեմն, Բուն հայոց տոմարի սկզբնավորման մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ, որոնք կարող ենք խմբավորել հետևյալ կերպ. Բուն տոմարն իր սկզբնավորումով հասնում է՝ 1. մ. թ. ա. VII—VI դդ. (Դյուլորիե), 2. մ. թ. ա. 488 թվականին (Գինցել), 3. մ. թ. ա. 2492 թվականին (Ալիշան և այլք), 4. սկզբնավորումը՝ 2492 թ. մ. թ. ա., օգտագործումը՝ մ. թ. ա. 460 թվականից (Լ. Սեմյոնով)։ Որպեսզի այս կարծիքները գնահատելիս ճիշտ կողմնորոշվենք, անհրաժեշտ է քննել հայոց Բուն թվականի կառուցվածքի հարաբերությունը այլ տոմարական համակարգերի հետ, այլ կերպ ասած, անհրաժեշտ է որոշել, թե հայերն այդ համակարգը փոխառել են այլ ժողովրդից, թե դա ինքնուրույն տոմար է։ Այս մասին երեք կարծիք կա։ Հայկական հին օրացույցը ծագում է՝ ա) պարսկականից, բ) եգիպտականից, գ) ինքնուրույն տոմարական համակարգ է։

---

16 Գ. Ադանյանց, Տոմար և տոնացույց Հայաստանյաց եկեղեցվո, Տփխիս, 1890, էջ 9—10։

17 Բ. Թումանյան, Հայոց մեծ և փոքր թվականների տարեսկզբի հարցի շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 6, էջ 99—100), նույնի՝ Տոմարի պատմություն, էջ 47։

18 Հ. Ս. Բաղալյան, նշվ. աշխ., էջ 54։

19 Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին (ՀՍՍՀ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», № 1, 1941, էջ 19—30)։

20 Ա. Գ. Աբրահամյան, Նախամաշտոցյան հայ գիր և գրություն, Երևան, 1982, էջ 108։

Դյուլորիեն գտնում է, որ հայկական հին օրացույցը մուտք է գործել Իրանից և այդ դրույթը հիմնավորում է հին պարսկական ու հայկական օրացույցների կառուցվածքի նույնությամբ։ Այս նույնությունն անառարկելի է. հին հայկական օրացույցի կառուցվածքը բացարձակապես նույնանում է պարսկականին։ Երկու տոմարներում էլ տարին բաժանվում է 12 երեսնօրյա ամիսների, որոնց ավելանում է հավելյաց հինգ օրը։ Պարսկական օրացույցում ամիսները շաբաթների չէին բաժանվում. ամսվա 30 օրերից յուրաքանչյուրն ուներ իր անունը, ինչպես և հավելյաց 5 օրը, հայերինը՝ նույնպես։ Պարսիկների նոր տարվա սկիզբն է եղել գարնանային գիշերահավասարի օրը, հայերինը՝ նույնպես։ Երկու տոմարների այս նույնությունը իրոք ենթադրում է հին հայկական և հին իրանական տոմարների ընդհանուր ծագումը, եթե չընդունենք, թե հայերն իրենց օրացուցային համակարգին հասել են ինքնուրույն կերպով։ Այս վերջին ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ պարսիկներն իրենց շարժական տոմարի անճշտությունն ուղղել են 120-ամյա պարբերաշրջանների. այսպես՝ հուլյան օրացույցի համեմատությամբ տարվա $^1/_4$ օրվա տարբերությունն, ինչպես տեսանք, 4 տարում դառնում է 1 օր, 120 տարում՝ 30 օր։ Պարսիկները 120 տարվա պարբերաշրջանը լրանալուց հետո մեկ հավելյալ ամիս են դրել իրենց 12 ամիսների մեջ. առաջին պարբերաշրջանը լրանալուց հետո այդ մեկ հավելյալ ամիսը մուծվել է առաջին ամսից՝ ֆերվերդինից հետո և կոչվել «երկրորդ ֆերվերդին», երկրորդ պարբերաշրջանից հետո մուծել են երկրորդ (օրդիբեհեշտ) ամսից հետո, կոչելով այն «երկրորդ օրդիբեհեշտ» և այդպես շարունակ։ Հայերի մեջ օրացույցում կատարվող այդպիսի ուղղման մասին ոչ մի տեղեկություն չկա։ Ավելին. սկսած մեր մատենագրության սկզբնավորությունից, երբ մեր Բուն տոմարն էր օգտագործվում դեռևս, այդպիսի ուղղումը ծանոթ չի եղել ո՛չ մեր մատենագիրներին և ո՛չ էլ տոմարագետներին, և Մեծ թվականն էլ, որ նույն օրացուցային համակարգն է շարունակում, այդպիսի ուղղման ոչ մի հետք չունի։ Այս տեսակետից կարևոր է նաև Խորենացու այն տեղեկությունը, ըստ որի հայրն Արտաշեսից առաջ հոգ չէին տարել տոմարի մասին, և Արտաշեսի օրոք է տոմարական կարգավորում տեղի ունեցել[21]։ Խորենացու այս տեղեկությունը պետք է հասկանալ այն մտքով, որ շարժական օրացույցի գործածությունից առաջացող $^1/_4$ օրվա սխալը ժամանակի ընթացքում հանգեցրել էր ամիսների զգալի տեղաշարժի, հետևաբար և՝ տարվա սկզբի առաջխաղացման հետևանքով ստեղծված եղանակների ու ամիսների զգալի անհամապատասխանություններ, որոնք կարգավորելու մասին հոգ է տարել Արտաշեսը։ Սա ցույց է տալիս, որ իրոք հայերը շարժական տոմարի առաջ բերած առաջխաղացումը կարգավորելու որևէ կայուն միջոց չեն գործադրել, որ երկար ժամանակի ընթացքում եղանակների և ամիսների զգալի անհամապատասխանության հանգեցնելով, անհրաժեշտություն է առաջ բերել տոմարի կարգավորման։ Այսպիսով, հայոց հին տոմարի նույնությունը պարսկականի հետ անուրանալի է, իսկ տարբերությունը միայն մեկ կետում է հանդես գալիս։

Անտեսելով այդ փաստերը, Լ. Սեմյոնովն այն կարծիքն է առաջ քաշում, թե իբր հայկական հին տոմարը եգիպտականի ուղղակի կամ միջնորդական փոխառությունն է[22]։ Նրա այդ վարկածը և դրա հաստատման համար բերված փաստարկները հիմնովին հերքել են Բ. Թումանյանը[23] և Հ. Բադալյանը[24], ուստի և այստեղ անհրաժեշտ չենք համարում կանգ առնել արդեն մերժված այդ վարկածի վրա։ Հ. Բադալյանը, հերքելով Լ. Սեմյոնովի վարկածը, այն կարծիքն է հայտնում, որ հայերը «ունեցել են ինքնուրույն տոմար»[25]։ Միևնույն ժամանակ նա ցույց է տալիս, որ Հայաստանն իր բնակլիմայական պայ-

---

21 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփխիս, 1913, Ա. գիրք, գլ. ԾԹ։

22 Լ. Սեմյոնով, նշվ. աշխ., էջ 22—23։

23 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 6, էջ 80։

24 Հ. Ս. Բադալյան, նշվ. աշխ., էջ 58—82։

25 Նույն տեղում, էջ 62։

մաններով այնպիսին է, որ ինքնին նախապայմաններ է ստեղծում զարգացած օրացուցային համակարգ ունենալու համար։ Մենք ընդունում ենք Հ. Բաղալյանի ինչպես քննադատությունը և հերքումները, այնպես էլ հավաստումն այն բանի, որ Հայաստանում կարող էր ինքնուրույն զարգանալ արեգակնային օրացույցի համակարգը, ուստի և հավանական ենք համարում հայոց տոմարի ինքնուրույն լինելը, ընդունելով միաժամանակ, որ պարսկական, կապադովկիական և այլ նմանատիպ օրացույցներ, ներառյալ նաև հայկականը, ստեղծվել են զարգացման ընդհանուր մակարդակի և միանման բնակլիմայական պայմանների առկայությամբ՝ Հայաստան, Իրան և ամբողջ Փոքրասիական տարածքում։

Ինչպես ասել ենք, շարժական տոմարի սկզբնավորության ժամանակը որոշելու համար կարևորագույնն այն է, թե որն է եղել այդ տոմարի ամանորը, տվյալ դեպքում՝ մեր Բուն տոմարի համար՝ նավասարդի մեկը՝ հուլյան տոմարի համապատասխանությամբ։ Տեսանք նաև, որ Ղ. Ալիշանն ընդունում է երկու կարգի՝ շարժական և հաստատուն տոմարների գոյությունը, համապատասխանորեն ընդունելով նաև երկու ամանոր՝ նավասարդի 1, որ համապատասխանել է օգոստոսի 11-ին, և արեգի 1, որ համապատասխանել է մարտի 9-ին՝ մ. թ. 428 թվականին։ Այդ համապատասխանությունը նա ընդունում է որպես նահանջից նահանջի (ապոկատաստասի) համապատասխանություն և դրա հիման վրա էլ, ինչպես տեսանք, Բուն թվականի առաջին շրջանի սկիզբը հասցնում մ. թ. ա. 2492 թվականին։

Հակառակ Ալիշանի, Դյուլորիեն, Գինցելը և նախասովետական շրջանի շատ հետազոտողներ մեր Բուն տոմարի տարեսկիզբը համարել են գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը։ Սովետական շրջանում էլ բոլոր հայագետները (աստղագետ-տոմարագետներ, պատմաբաններ, բանասերներ) ընդունել են այդ նույնը։ Դա կասկածից վեր է։ Իբրև դրա անառարկելի ապացույց հիշենք միայն հետևյալ փաստերը։ Հինգերորդ դարում, երբ թարգմանվեց Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա աղյուսակների ներածությունը, թարգմանչի կողմից կատարված ընդմիջարկությունում ասվում է, թե գիշերահավասարի օրը մարտի 20-ն է։ Սա շատ ծանրակշիռ փաստարկ է հետևյալ պատճառով։ Անդրեասի երկուհարյուրամյա տոնացույցը կազմվել է Նիկիայի ժողովի որոշումների համաձայն՝ զատկական տոնի օրերը կարգավորելու նպատակով. այդ տոնացույցը կազմելուն պես գործադրվել է շատ ժողովուրդների կողմից, որի հետևանքով էլ նրա մեջ իբրև կայուն գիշերահավասարի օր ընդունված մարտի 21-ը որդեգրվել է այդ ժողովուրդների կողմից։ Քրիստոնեական եկեղեցին սրբագործեց այդ կայուն օրը, հայտարարելով, թե իբր Նիկիայի ժողովն է որոշել իբրև գիշերահավասարի կայուն օր ընդունել մարտի 21-ը, թեև իրականում Նիկիայի ժողովում այդպիսի որոշում չի կայացվել։ Հայոց եկեղեցին, որ հետևել է Նիկիայի ժողովի որոշումներին; հատկապես զատկական տոնի օրվա առթիվ ընդունած որոշման (զատիկը պետք է կատարել գարնանային գիշերահավասարից հետո, լուսնի առաջին լրումին հաջորդող կիրակի օրը), այնուամենայնիվ, չի ընդունել ուրիշ եկեղեցիների սրբագործած գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը, այլ իբրև կայուն օր է ընդունել մարտի 20-ը։ Հասկանալի է, որ այս շեղումը չի կարող կամայական լինել. այն պետք է մի ինչ-որ լուրջ պատճառ ունենար, և այդ պատճառը մենք համարում ենք դարեր շարունակ հայերի մեջ ամրացած ու սրբագործված ավանդույթը, այսինքն՝ այն, որ գիշերահավասարը, որը միաժամանակ նաև առարեմուտի օրն էր, մարտի 20-ն է եղել։ Այս սրբագործված ավանդույթը միայն կարող էր հարկադրել հայերին չընդունել մարտի 21-ը որպես գիշերահավասարի օր և ողջ հետագա դարերում էլ անխախտ պահել դա։ Որ իրոք հայերը հետագա դարերում էլ մարտի 20-ն են համարել գիշերահավասարի և առարեմուտի օր, նշում են մեր շատ տոմարագետ-մատենագիրները, սակայն առավել պերճախոս վկայությունն այն է, որ ինչպես Անանիա Շիրակացին, այնպես էլ Հովհաննես Իմաստասերը իրենց ՇԼԲ աղյուսակներում ամբողջ 532 տարիների համար կրկնում են՝ գիշերահավասար («հաստատված») մարտի 20.

Այս բոլորը անառարկելիորեն ապացուցում են, որ հայոց տարեմուտը, որը հենց նույն տոմարագետների վկայությամբ լինում էր գարնանային դիշերահավասարի օրը, եղել է մարտի 20-ին։

Մեր ասածները հայոց գարնանամուտի (=տարեսկզբի) մասին, ինքնին արդեն հերքում են Ղ. Ալիշանի կարծիքը և ցույց տալիս, որ նրա կատարած հաշվումներն անընդունելի ելակետի վրա են հենվում։

Ցուրահատուկ դիրք է գրավում Լ. Սեմյոնովը։ Նա որպես ամանոր է ընդունում գարնանային դիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը։ Այդ ելակետն ընդունելով, նա 428 թվականի օգոստոսի 11=նավասարդի 1 համապատասխանության հիման վրա որոշում է, թե երբ է եղել մարտի 20=նավասարդի 1 համապատասխանությունը։ Իր հաշվումներով նա գտնում է, որ այդ զուգադիպությունը եղել է մ. թ. ա. 460 թվականին[26], սակայն հետևելով Ղ. Ալիշանին, նա նահանջից նահանջ է համարում 428 թվականի օգոստոսի 11=նավասարդի 1 զուգադիպությունը և դրանից ելնելով էլ հայոց Բուն թվականի սկզբնավորումը հանգեցնում մ. թ. ա. 2492 թվականին, ինչպես վարվում է Ղ. Ալիշանը։ Լ. Սեմյոնովի այս երկու դրույթները փոխադարձաբար հերքում են միմյանց. եթե իսկապես հայոց տոմարի ապոկատաստասը՝ նահանջից նահանջը, 428 թվականին է եղել, ապա սկզբնավորման համար դրանից պետք է հետ գնալ մեկ շրջան՝ 1460 տարի, եթե անհրաժեշտ է ևս մեկ շրջան՝ 1460 տարի, և կհանդենք հենց Ղ. Ալիշանի որոշած թվականին։ Բայց այդ բանը կրկնելով, Լ. Սեմյոնովը գտնում է նաև, որ հայոց տարեսկիզբը եղել է գարնանային դիշերահավասարի օրը՝ մարտի 20-ին, որով և ջնջում է իր այդ պընդումը և թվականի սկիզբը հանգեցնում մ. թ. ա. 460 թվականին։ Հակասությունից ելք գտնելու համար նա դիմում է մի այլ վարկածի. հայկական Բուն թվականն իբր ստեղծվել է 2492-ին մ. թ. ա., բայց գործադրության մեջ է դրվել մ. թ. ա. 460 թվականին։ Սրա շատ պարզ հերքումը հետևյալն է. ապոկատաստաս կոչվածը այլ բան չէ, եթե ոչ 1460 տարվա շրջանը լրանալուց հետո սկզբնական կետին, այսինքն՝ անշարժ և շարժական օրացույցների սկզբնական համապատասխանության դառնալը, կրկնվելը։ Լ. Սեմյոնովը մի կողմից ապոկատաստասի տարի է ընդունում 428 թվականը, մյուս կողմից տարեսկիզբը համարում մարտի 20-ը. ինքնին հասկանալի է, որ եթե ապոկատաստասի մասին է խոսվում, ապա ապոկատաստասի տարին պետք է լինի հենց այն թվականը, երբ կրկին ստեղծվում է տարեսկզբի օրվա համապատասխանությունը ելակետային, տոմարի սկզբնավորման տարվա դրությամբ։ Ըստ այդմ, եթե տարեսկիզբ ենք համարում մարտի 20-ը, որ համապատասխանել է նավասարդի 1-ին մ. թ. ա. 460 թվականին, ապա նահանջից նահանջը կարող է լինել դրանից 1460 տարի հետո, այն է՝ մ. թ. 1000—1003 թթ. քառամյակում։ Այսպիսով, Լ. Սեմյոնովի առաջ քաշած վարկածներից ոչ մեկն էլ ընդունելի չէ, ուստի և Բուն թվականի սկզբնավորման տարեթիվը որոշելու համար չեն կարող հաշվի առնվել։ Չի կարելի արդարացնել նրա նաև այն պընդումը, թե իբր տոմարի սկզբնավորման և դրա գործադրության թվականները տարբեր են (սկիզբը՝ 2492, գործադրությունը՝ 460 մ. թ. ա.)։ Եթե որևէ ժողովուրդ սկզբնավորել, ստեղծել է և ունի տոմար, ապա դա ինքնին նշանակում է, թե տվյալ ժողովուրդը ստեղծել ու գործադրել է այդ տոմարը, ավելին՝

---

26 Լ. Սեմյոնովի հաշվարկն ունի մեկ քառամյակի սխալ, որի պատճառը հետևյալն է։ Հին հայկական տարեմուտից՝ մարտի 20-ից մինչև օգոստոսի 11=նավասարդի 1 համապատասխանության հասնելն անցած օրերի քանակը որոշելու համար նա ներառում է նաև օգոստոսի 11-ը և ստանում 222 օր։ Բայց դա ճիշտ չէ. օգոստոսի 11-ով սկսվում է նոր քառամյակ, որ ավարտվում է 432 թ. օգոստոսի 9-ով (հաջորդ քառամյակն սկսվում է 432 թ. օգոստոսի 10=նավասարդի 1 համապատասխանությամբ), իսկ դա նշանակում է, թե օգոստոսի 11-ը անցած օրերի քանակի մեջ չպետք է մտցնել։ Այս դեպքում մարտի 20-ից օգոստոսի 11-ի միջև ընկած օրերի թիվը կլինի 221, անցած տարիների քանակը՝ 884 տարի, 428 թվականից հանած 884 տարի՝ հավասար է—456 թվականին (մ. թ. ա.)։

գործադրությամբ է ստեղծել տոմարը։ Հին ժամանակներում ժողովուրդները հենց այնպես, «հանուն արվեստիս», տոմար չեն ստեղծել. նրանք իրական կյանքի պահանջների թելադրանքով անհրաժեշտաբար ստեղծել են ժամանակը չափելու միավորներ (տարի, տարվա եղանակներ, ամիս, օր և այլն), ստեղծել են իրական գործադրությամբ և ոչ թե սոսկ իբրև մտավարժանքի առարկա։ Եվ, վերջապես, եթե հայերը արհեստական տոմար են ընդունել և գործադրել մ. թ. ա. 460 թվականին, երբ նավասարդի 1-ը մարտի 20-ին էր, էլ ինչպե՞ս կարող էր նահանջից նահանջը լինել 428 թվականին։

Եվ այսպես, հերքելով Լ. Սեմյոնովի սխալ դրույթները, մենք չենք ընդունում նաև Դյուլորիեի կարծիքը՝ հայոց Բուն թվականի սկիզբը Զրադաշտ մարգարեի կողմից պարսից տոմարն ստեղծելու ավանդության հետ կապելու մասին, ինչպես և Գինցելի նշած մ. թ. ա. 488 թվականը, քանի որ նրա համար նույնպես իբրև ելակետ է ծառայում պարսկական տոմարը, ըստ որում նրա ընդունած 488 թվականը բխում է Մարկվարտի այն կարծիքից, որի համաձայն հին պարսկական տոմարի վերջին բարեփոխությունը տեղի է ունեցել Դարեհի ժամանակ, մոտավորապես 488 թվականին[27]։ Վերջապես մերժում ենք նաև Ղ. Ալիշանի տեսությունը։ Այդ տեսությունն ըստ էության նորություն չէ։ Մեր Բուն թվականի սկզբնավորությունը Հայկ նահապետի անվան հետ կապելը հին հայկական առասպելաբանության արձագանքն է։ Այսպես, դեռևս Անանիա Շիրակացին գրում է, թե հայոց ամսանունները Քրիստոսի մարդեղությունից առաջ են դրվել՝ Հայկ նահապետի աղջիկների և տղաների անուններով[28]։ Ավելի որոշակի է պատմում Հովհաննես Իմաստասերը. «Բայց արուեստիդ տումարի յառաջագոյն նախ Մովսէս գրեաց եբրայեցւոցն հրամանաւ Աստուծոյ ... Այլ յառաջ քան զՄովսէս ոչ ուրեք էր գիտութիւն արուեստիս, բայց միայն ի հայ ամսոցդ, որ էին յառաջ քան զՄովսէս, քանզի ասեն, թէ ի ձեռն հոգւոյն, որ ազդէր ի Նահապետսն, Հայկն, առաջին Նահապետն Հայոց, դամիրդ կարգեաց և զանուանս ուստերաց և դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց»[29]։ Ինչպես տեսնում ենք, Ղ. Ալիշանը պարզապես իբրև հիմք է ընդունել հին հայկական առասպելաբանությունը և զանազան հիմնավորումներով ու փաստարկներով ձգտել հաստատել այդ առասպելը։ Այդ փաստարկներից նրանք, որոնք նա «արտաքին վկայություններ» է անվանում, որևէ գիտական արժեք չունեն. դրանք Եվսեբիոսի և Աֆրիկանոսի՝ աստվածաշնչական առասպելաբանության հետ կապված նույնքան առասպելական ժամանակագրություն են։

Կարևորագույն և հիմնական փաստը, որ Ղ. Ալիշանի տեսության հաստատման համար կարող էր գիտական կռվան լինել, նահանջից նահանջը (ապոկատաստասը) 428 թվականին ընդունելն է։ Ինչպես տեսանք, ոչ միայն Ալիշանը, այլ և մեր ժամանակի տոմարագետներն էլ 428 թվականը հայոց տոմարի համար դարաղլուխ են համարում։ Դրա հիմնական պատճառն այն է, որ Հովհաննես Իմաստասերն իր տոմարի համար իբրև ելակետ է ընդունել 428 թ. նավասարդի 1=օգոստոսի 11 համապատասխանությունը։ Ղ. Ալիշանը, Գ. Աղանյանցը, Լ. Սեմյոնովը և ուրիշներ դա բացատրում են նրանով, որ Հովհաննես Իմաստասերը տոմարական հաշվումներով ապացուցել է, որ 428 թվականը եղել է նահանջից նահանջի տարի և մեր մատենագրության հայրերի՝ Մեսրոպի ու Սահակի հիշատակը հավերժացնելու նպատակով իր տոմարը կազմելու տարում՝ 1084 թվականին, նավասարդի 1-ը համարել է օգոստոսի 11-ը, թեև Բուն տոմարով (մեր հին շարժական տոմարով) 1084 թ. հայոց նավասարդի 1-ը համընկնում էր փետրվարի 29-ին։ Ոմանք էլ այս փաստը բացատրել են նրանով, որ Հովհաննեսը 428 թվականը հիմք է ընդունել այլ պատճառով։ Նա, իբր, հին աղբյուրների տոմարագիտական հաշվումներով գտել է, որ 428

---

[27] F. K. Ginzel, նշվ. աշխ., էջ 27։

[28] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 76։

[29] Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 224։

թվականին, երբ նավասարդի 1-ը համապատասխանում էր օգոստոսի 11-ին, գարնանային գիշերահավասարի օրը եղել է մարտի 21-ը, և որովհետև «հին հայկական հեթանոսական տարվա ամանորը եղել է գարնան գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին»[30], ուստի և Հովհաննեսն էլ որպես ելակետ է ընդունել 428 թվականի դրությունը։ Այս ենթադրությունը ճիշտ չէ, որովհետև՝ ա) ըստ Հովհաննեսի հաշվումների 428 թվականին գարնանային գիշերահավասարի օրն է եղել մարտի 20-ը, բ) ինչպես վերը տեսանք, հայերը որպես գարնանային գիշերահավասարի կայուն օր ընդունել են մարտի 20-ը։ Ինքը՝ Ա. Գ. Աբրահամյանն էլ, Հովհաննես Իմաստասերի մատենագրության ուսումնասիրության մեջ բոլորովին այլ բան է գրում. «Հովհաննեսն իր այս աշխատության մեջ նախ կանգ է առել գարնանային գիշերահավասարի վրա։ Նա բերում է դոյություն ունեցող տարբեր տեսակետները և գտնում, որ դոյություն ունեցող տարբեր տեսակետներից ամենից ճիշտը մարտի 20-ն է, որը համապատասխանում է եգիպտացոց պեմենովթ ամսի 24-ին, եբրայեցոց ավելյաց 4-ին, իսկ հայոց՝ արեգի 12-ին։ ...Մարտի 20-ը գարնանային հավասարության (գիշերահավասարի.—է. Ա.) հիմք ընդունելով, այն համապատասխանեցնելով արեգի 12-ին և այդ հետևողականությամբ դուգադրելով հայկական ամսաթիվը հռոմեականին, նավասարդի 1-ը ընկնում է օգոստոսի 11-ին»[31]։ Այս բոլորը միանգամայն ճշմարիտ է, և ցավալի է, որ հիշյալ տողերի հեղինակը մոռանալով այդ ճշմարտությունը, ջնջել է դրանք՝ մի թյուր կարծիք առաջ քաշելու համար։ Հովհաննես Իմաստասերի տոմարի սկզբնավորության մասին արտահայտած բոլոր թյուր կարծիքները հերքեց աստղագետ Բ. Թումանյանն իր մի ուսումնասիրությամբ[32], որի մեջ նա քննության է առնում 428 թ. օգոստոսի 11=նավասարդի 1 համապատասխանությունը և Հովհաննեսի կողմից դա որպես իր կայուն օրացույցի ամանոր ընդունելու առեղծվածը և հանգում հետևյալ եզրակացության. «Հովհաննես Սարկավագը տարեսկիզբը փետրվարի վերջից (1084 թ.) տեղափոխել է օգոստոսի 11-ը երկու պատճառով՝ ա) վերացնելու այն պակասը, որն առաջացել էր Հայոց մեծ թվականը շարժական տոմար լինելու պատճառով, բ) նմանեցնելու տոմարն այն տոմարի հետ, որով առաջնորդվել են Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները հինգերորդ դարում»[33]։ Մենք անվերապահորեն ընդունում ենք առաջին կետը՝ որպես սկզբունք, բայց կատարում ենք հետևյալ ուղղումը։ Ըստ Բ. Թումանյանի եզրակացության, Հովհաննեսը ամանորի տեղափոխությամբ վերացրել է շարժական և անշարժ տոմարների տարբերությունը (շարժական տոմարի օրերի պակասը)։ Հայոց մեծ թվականի սկիզբն է 552 թվականը, երբ մեր նավասարդի 1-ը համապատասխանում էր հուլիսի 11-ին։ Այդ թվականից մինչև 1084-ը անցել էր 532 տարի, ուստի և մեր շարժական տոմարի համաձայն այդքան տարվա ընթացքում գոյացել է 134 օրվա պակաս։ Եթե Հովհաննեսն այդ պակասը լրացնելու ձգտեր, ապա ամանորը փետրվարի 29-ից կտեղափոխվեր հուլիսի 11-ին, ըստ որում փետրվարի 29-ից մինչև հուլիսի 11-ը 134 օր է։ Սակայն Հովհաննեսը դրան ավելացրել է ևս մեկ ամիս՝ 30 օր և ամանորը հասցրել օգոստոսի 11-ին, այսինքն՝ լրացրել է 164 օրվա պակասը։ Արդ՝ 164 օրը կարող է գոյանալ 656 տարվա ընթացքում (164×4=656), իսկ 1084 թվականից հանելով 656 տարի, կստանանք 428 թվականը։ Ուրեմն, Հովհաննես Իմաստասերը նավասարդի 1-ը փետրվարի 29-ից փոխադրել է օգոստոսի 11-ը՝ 428-ից մինչև 1084 թվականի ընթացքում մեր շարժական տոմարով 656 տարիների գոյացրած պակաս օրերը լրացնելու համար։

Բ. Թումանյանի եզրակացության երկրորդ կետը նույնանում է Ղ. Ալիշանի, Լ. Սեմյոնովի, Ա. Աբրահամյանի այն վարկածին, ըստ որի Հովհաննեսը 428 թվականն իբրև դարագլուխ է ընդունել Մեսրոպի և Սահակի կամ Մեսրո-

30 Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1978, էջ 99։

31 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 94։

32 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 6, էջ 79—85։

33 Նույն տեղում, էջ 82։

այի և իր աշակերտների հիշատակը հավերժացնելու նպատակով։ Այս վարկածը դուրկ է որևէ հիմքից։ Նախ՝ Հովհաննես Իմաստասերն իր աշխատությունների մեջ ոչ մի անգամ չի հիշում ո՛չ Մեսրոպ Մաշտոցի, ո՛չ էլ Սահակ Պարթևի անունը։ Իր «ժամանակագրության» մեջ նա ունի Սահակ և Մաշտոց անունները, որ հրատարակիչը իր կազմած անվանացանկում բացահայտ թյուրիմացությամբ նույնացրել է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի անուններին, բայց ահա՛ Հովհաննեսի գրածը. «Մխե (245) թուին Սահակ և Հովսեփ կաստուրեցան վկայութեամբ։ ՅԽԱ (341) Մաշտոց ճգնաւորական հանդիսիւ պայծառանայր»[34]։ Մխե և ՄԽԱ թվականները հայոց Մեծ թվականով են, ուրեմն՝ 552+245=797 և 552+241=793 թթ., դրանք VIII դ. ապրած մարդիկ են։ Այնուհետև. ընդունենք, թե իրոք Հովհաննեսը կամեցել է հավերժացնել Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի հիշատակը, բայց ինչո՞ւ 428 թվականն է ընտրել։ Դա հայոց պատմության մեջ հայտնի է նրանով, որ հենց այդ տարում վերացվեց հայկական թագավորությունը (Արշակունիների հարստությունը), և աթոռազուրկ արվեց Սահակ կաթողիկոսը։ Մեսրոպի և Սահակի հիշատակը հավերժացնել ցանկացող Հովհաննեսը հենց այդ ողբերգական թվակա՞նը պետք է ընտրեր։ Որպեսզի մեր դատողություններն առավել համոզիչ դարձնենք, հետևյալ հարցն առաջադրենք. ի՞նչ թվական կընտրեինք մենք Մեսրոպի և Սահակի հիշատակը հավերժացնելու համար։ Հասկանալի է, որ մեր ընտրությունը կանգ կառներ երկու իրադարձությունների վրա՝ ա) գրերի գյուտի թվականը, բ) Սահակի ու Մեսրոպի մահվան թվականը։ Այս երկրորդը կարող է տարօրինակ թվալ, որովհետև Սահակը վախճանվել է 439, իսկ Մեսրոպը՝ 440 թվականին, որոնցից առաջինի ժամանակ (439 թ.) հայոց նավասարդը համապատասխանում էր հուլյան օգոստոսի 9-ին, իսկ երկրորդում (440-ին)՝ օգոստոսի 8-ին, ուստի և հարց կծագեր, թե դրանցից ո՞րը պետք է ընտրել։ Սակայն այդ հարցը ինքնին կվերանա, եթե հիշենք, որ 439 և 440-ը տարբեր տարիներ են հուլյան տոմարով, բայց միևնույն տարին՝ հայոց շարժական տոմարով։ Սահակը մահացել է 439-ի սեպտեմբեր=հայոց նավասարդի 30-ին, Մեսրոպը՝ 440 թ. փետրվարի 17=մեհեկանի 13-ին. երկուսն էլ ընկնում են 439 թվականով սկսվող հայոց միևնույն տարվա մեջ, մեկը՝ առաջին, մյուսը՝ 7-րդ ամսում։ Ուրեմն, կարելի էր որպես հիմք ընդունել 439 թվականի դրությունը և հայոց նավասարդի 1-ը փոխադրել այդ օրվան կամ ընտրել գրերի գյուտի տարին, ասենք՝ 406 թվականի դրությունը և նավասարդի 1-ը փոխադրել օգոստոսի 17-ը։ Այնպես որ, ոչ մի հիմք չունենք մտածելու, թե Հովհաննես Իմաստասերը Սահակի և Մեսրոպի հիշատակը հավերժացնելու նպատակով կընտրեր մի այնպիսի թվական, որն ըստ էության նրանց համար հիշարժան տարի չի եղել։ Այս բոլորի հիման վրա մերժում ենք նավասարդի 1-ը փետրվարի 29-ից օգոստոսի 11-ը փոխադրելը Սահակի ու Մեսրոպի հիշատակի հավերժացման հետ կապելու վարկածը և գտնում, որ այդ տեղափոխության համար Հովհաննեսն ունեցել է մի ուրիշ, միանգամայն օբյեկտիվ պատճառ, և այդ պատճառն էր Անդրեաս Բյուզանդացու 200-ամյա տոնացույցի գործածությունը։ Հայտնի է, որ 200-ամյա տոնացույցն սկսվում է 353 թվականով և ավարտվում 552-ով։ Հայագիտության մեջ այն կարծիքն է իշխում, թե այդ տոնացույցը հայերի, ինչպես և ուրիշ ժողովուրդների կողմից գործածության մեջ է դրվել հենց սկզբից, սակայն դրա համար ոչ մի ապացույց չի բերվում, այլ պարզապես մտածում են՝ քանի որ տոնացույցի սկիզբը 353 թվականն է, ապա գործածությունն էլ այդ թվականից պետք է լիներ։ Մեր բոլոր միջնադարյան տոմարագետներն ու մատենագիրները, որոնք հիշատակում են այդ տոնացույցը, նշում են միայն նրա ավարտվելու տարին, բայց ոչ մեկը չի ասում, թե երբվանից են հայերը գործածության մեջ դրել այն։ Եվ որովհետև ոչ մի իրական փաստ չկա, ապա հայագետներն էլ առանց որևէ հիմնավորման գործադրությունն ընդունել են 353 թվականից։ Այս կարծիքը, սակայն, ինքնին հերք-

34 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 133։

վում է Անդրեասի տոնացույցի հայերեն թարգմանությամբ, որ գտել և հրատարակել է Ա. Գ. Աբրահամյանը[35], *ապա և մենք*[36]։

Ուսումնասիրելով այդ թարգմանությունը, մենք ապացուցել ենք, որ այն թարգմանվել է 421 թվականին։ Միևնույն ժամանակ ցույց ենք տվել, որ մեզ հասած օրինակի մեջ կան թարգմանչի կողմից կատարված հավելումներ (ընդմիջարկություններ), որոնք հնարավորություն են տալիս որոշելու թարգմանության ժամանակը, ինչպես և պարզելու որոշ տոմարագիտական հարցեր։ Տրվյալ դեպքում կարևոր է մեր հրատարակած «երկրորդ տարբերակի» այն տեղեկությունը, որ վերաբերում է զատկացանկերի տարբեր համակարգերին։ Այդ տեղեկությունը թույլ է տալիս հաստատելու, որ հայերը մինչև 428 թվականն առաջնորդվել են տասնիններյակներով, և միայն 428 թվականից, չորրորդ տասնիններյակի ավարտվելուց հետո (428—352=76, որ է չորս տասնիններյակ), անցել են Անդրեասի երկուհարյուրամյակի օգտագործմանը։ Այս էլ, ահա, մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ Հովհաննեսն իր տոմարը կազմելուց առաջ նախ որոշել է (եթե նախապես չգիտեր), թե երբ են հայերը գործադրության մեջ դրել Անդրեասի տոնացույցը, ապա՝ այդ թվականն էլ ընտրելով որպես իր տոմարական համակարգի սկիզբ՝ որոշել 428 թվականի նավասարդի 1-ի, գարնանային և աշնանային գիշերահավասարների և քրիստոնեական եկեղեցու զանազան տոների օրերը՝ հայոց շարժական և հուլյան անշարժ տոմարների զուգադրությամբ, որոնք պետք է իր կայուն տոմարի հիմքը կազմեին։

Այս բոլորի եզրակացությունը հետևյալն է. Հովհաննես Իմաստասերի՝ 428 թվականի դրությամբ առաջնորդվելը և հայոց սամանոր փետրվարից օգոստոսի 11-ը փոխադրելը ոչ մի կապ չունի հայոց Բուն թվականի նահանջից նահանջի հետ, ուստի և՝ այդ թվականի վրա հենվելով Բուն թվականի սկիզբը որոշելը որևէ պատմական ու գիտական հիմք չունի։

Այս եզրակացության վրա հենվելով և ընդունելով, որ ինչպես 428 թվականից գործադրված՝ Անդրեասի 200-ամյա տոնացույցը (հայերի համար՝ 124-ամյա. 552—428=124), այնպես էլ 553-ից սկզբնավորվող Շիրակացու աղյուսակները, ուստի և՝ հայոց Մեծ թվականը, պարզ շարունակությունն են հայոց Բուն թվականի շարժական օրացույցի, մենք գտնում ենք, որ մինչև Հովհաննես Իմաստասերի ստեղծած տոմարը (մինչև 1084 թվականը), հայերն անընդհատաբար շարունակել են իրենց ժամանակաշափությունը՝ սկսած Բուն թվականի սկզբնավորության օրից։

Այս դրույթը հիմք ընդունելով, կարող ենք որոշակի հաշվումներ կատարել՝ մեր Բուն տոմարի սկզբնավորման (նրա առաջին տարվա) ժամանակը որոշելու համար։ Քանի որ Բուն տոմարի առաջին տարվա նավասարդի 1-ը, ինչպես վերը ապացուցեցինք, եղել է գարնանային գիշերահավասարի օրը, այսինքն՝ մարտի 20-ը, ապա 428 թվականից պետք է դեպի ետ գնալ այնքան տարի, որքան անհրաժեշտ է մարտի 20=նավասարդի 1 համապատասխանությանը հանգելու համար։ Ուրեմն, անհրաժեշտ է թվաբանական պարզ գործողություններ կատարել՝ հետևյալ հարցերի պատասխանը գտնելու նպատակով, 1) 428 թվականին նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ին. հետադարձ հաշվով քանի՞ օր է ընկած մարտի 20-ից մինչև օգոստոսի 11-ը, 2) քանի՞ տարի էր հարկավոր այդքան օրվա առաջխաղացման համար։

Առաջին հարցի պատասխանը գտնելու համար պետք է հաշվել մարտի 20-ից մինչև օգոստոսի 11-ի օրերը՝ հետևենթաց կարգով, այսպես՝ մարտ՝ 20 օր, փետրվար՝ 28 օր, հունվար՝ 31 օր, դեկտեմբեր՝ 31 օր, նոյեմբեր՝ 30 օր, հոկտեմբեր՝ 31 օր, սեպտեմբեր՝ 30 օր և օգոստոսի 20 օրը (11-ը բացառում ենք)=221 օրվա։

---

35 Ա. Գ. Աբրահամյան, *Անդրեասի աշխատությունների մի քանի ֆրագմենտների մասին («Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», Երևան, 1967, էջ 58—82)։*

36 Է. Բ. Աղայան, *Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը և նրա հայերեն թարգմանությունը (ԲՆՀ, 1979, № 2, էջ 122—139)։*

Երկրորդ հարցի պատասխանը գտնելու համար ստացված 221 օրը պետք է բազմապատկել 4-ով, քանի որ մեկ օրվա առաջխաղացումը (մեր և հուլյան տարիների մեկօրյա տարբերությունը) ստացվում է չորս տարվա ընթացքում. 221×4=884։

Այսպիսով, մեր Բուն տոմարի առաջին տարվանից մինչև 428 թվականն անցել է 884 տարի։ Որպեսզի ստանանք Բուն թվականի առաջին տարին, պետք է 428 թվականից ետ գնանք 884 տարի, իսկ դրա համար այդ թվից պետք է հանենք մեր թվականության 428 տարիները, որով կստանանք մեր թվականությունից առաջ 456 թվականը (884—428=456)։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ հաշվարկի մեջ 428 թվականն առել ենք ամբողջությամբ, մինչդեռ իրականում նախորդ շրջանին պատկանում է միայն 428 թվականի մի մասը (մինչև օգոստոսի 11-ը), ուստի և համապատասխանաբար անհրաժեշտ է—456 թվականից ետ գնալ մինչև—457 թվականի մարտի 20-ը։ Այսպիսով, միևնույն համապատասխանությունը (նավասարդի 20=մարտի 20) ունեցող առաջին քառամյակը կլինի մ. թ. ա. 457—53 թթ.։ Ըստ այդմ մեր բուն թվականն սկզբնավորվել է մ. թ. ա. 457 թվականի նավասարդի 1-ով=մարտի 20-ով:

Ունենալով Բուն թվականի սկզբնավորման թիվը, կարող ենք որոշել նաև նահանջից նահանջի՝ ապոկատաստասի, այսինքն՝ 1460-ամյա շրջանը լրանալու և նոր շրջանն սկսվելու թվականները։ Քանի որ մեր թվականությունից առաջ Բուն թվականից անցել է 456 տարի, ապա հայկյան շրջանը լրանալու համար մնում է 1004 տարի, ուրեմն մեր թվականության 1004-րդ տարին էլ Հայկյան շրջանի (Սոթիսի շրջանի) վերջին տարին է և նոր շրջանի առաջին տարին, ուստի և նավասարդի 1-ը պետք է համապատասխաներ մարտի 20-ին։ Իրոք էլ, ըստ Բ. Թումանյանի և Հ. Բաղալյանի կազմած աղյուսակների, 1004—1007 թվականներին հայոց շարժական տոմարով նավասարդի 1-ը համընկել է մարտի 20-ին։ Պետք է նկատի ունենալ, սակայն, որ այս ամբողջ հաշվումները հիմնված են մեր այն ելակետային դրույթի վրա, ըստ որի հայոց Բուն թվականի առաջին տարվա նավասարդի 1-ը համապատասխանել է գարնանային գիշերահավասարի օրվան, որը, ինչպես ընդունված է հայագետների մեծագույն մասի կողմից, եղել է մարտի 20-ին։ Այս երկու ելակետային տվյալների ճշգրտությունը մենք վերն աշխատեցինք ապացուցել։ Այժմ անհրաժեշտ է, սակայն, ապացուցել, որ 1004 թվականն իսկապես եղել է Հայկյան շրջանի լրանալու տարին և որ, հետևաբար, հայոց շարժական տոմարի 1461 տարին ավարտվել է հենց նույն թվականով։ Այդ նպատակով կրկին դիմենք Հովհաննես Իմաստասերին։ Ինչպես վերը տեսանք, իր ՇԼԲ (532 տարվա) աղյուսակի համար նա իբրև տարեսկիզբ է ընդունել օգոստոսի 11-ը՝ 428-ից մինչև 1084 թվականը (իր աղյուսակի առաջին տարին) ընկած ժամանակաշրջանի հուլյան տոմարի և մեր շարժական տոմարի միջև ստեղծված տարբերությունը վերացնելու (պակաս օրերը լրացնելու) համար։ Այդ հաշվարկի տոմարագիտական հիմքը հետևյալն է. 428 թվականից մինչև 1084 թվականը հավասար է 656 տարվա, որ կազմում է 239604 օր՝ հուլյան տոմարով և 239440 օր՝ հայոց տոմարով. տարբերությունն է 164 օր, որ և Հովհաննես Իմաստասերը ավելացրել է՝ տարեսկիզբը տեղափոխելով օգոստոսի 11-ին։ Եվ չնայած դրան, նա իր ՇԼԲ աղյուսակն սկսում է 1085 թվականի զատկով, բաց թողնելով մի ամբողջ տարի։ Որպեսզի մեր հետագայի հաշվումները հասկանալի լինեն, հարկ է մի երկու անհրաժեշտ տեղեկություններ տալ զատկացանկերի մասին։ Ինչպես Անանիա Շիրակացու, այնպես էլ Հովհաննես Իմաստասերի տոմարական աղյուսակները, որոնք կրում են «ՇԼԲ բոլորակ» անվանումը կամ պարզապես՝ «հինգհարիւրեակ», ոչ թե սովորական օրացուցային աղյուսակներ են, այլ զատկացույց-տոնացույցներ՝ 532 տարվա պարբերաշրջանի համար։ Այդ տոնացույցները պարունակում են նաև վերադիրների, տանուտերերի օրերը և հայտնության, առաջավորաց, բուն բարեկենդանի, լուսնի լրումների, պենտակոստեի ու վարդավառի օրերը, բայց դա որևէ կարևորություն չունի, քանի որ այդ բո-

լոր տոների համար իբրև ելակետ է ծառայում զատկական տոնի օրը, այլ կերպ ասած, այդ բոլոր տոների առաջին տարին այն թվականն է, որին պատկանում է զատիկը։ Ադդ, Անանիա Շիրակացու ՇԼԲ աղյուսակի առաջին զատիկը 553 թվականի ապրիլի 20-ին է, ուստի և այդ աղյուսակը, որով հիմք է դրվել հայոց Մեծ թվականի, սկսվում է 553 թվականով։ Սակայն դրանից չի կարելի եզրակացնել, թե հայոց Մեծ թվականն սկիզբ է առնում 553 թվականից, ինչպես կարծել են ոմանք։ Որպեսզի դրանում համոզվենք, պետք է հաշվի առնենք հետևյալ փաստը. Անդրեաս Բյուղանդացու երկուհարյուրամյա աղյուսակն սկսվում էր 353 թվականով և ավարտվում 552-ով, որ նշանակում է, թե վերջին զատիկը 552 թվականին էր։ Ինչպես բազմիցս ասել ենք, 552 թվականին հայոց նավասարդի 1-ը համընկել է հուլիսի 11-ին։ Սա էլ իր հերթին նշանակում է, թե Անդրեասի աղյուսակի վերջին զատիկը պատկանում էր հայոց տոմարի ոչ թե հուլիսի 11-ով սկսվող տարվան, այլ նախորդ՝ 551 թվականի հուլիսի 12-ով սկսվող տարվան և ընկնում էր 552 թվականի ապրիլի 9-ին=մարերի 2-ին։ Հասկանալի է, որ այդ զատիկը, որ մտել էր Անդրեասի 200-ամյա տոնացույցի մեջ, չէր կարող տեղ գտնել նաև Շիրակացու աղյուսակի մեջ, և Շիրակացին միանգամայն հասկանալի կերպով իր աղյուսակն սկսել է 552 թ. հուլիսի 11-ով սկզբնավորվող նոր տարվա զատկով, որ ընկնում էր 553 թվականի ապրիլի 20-ին=հայոց Մեծ թվականի առաջին տարվա մարերի 14-ին։ Ուրեմն՝ հայոց Մեծ թվականի սկիզբը, ըստ Շիրակացու աղյուսակի, 552 թվականի հուլիսի 11-ն է, իսկ աղյուսակի առաջին զատիկը՝ 553 թվականի ապրիլի 20=մարերի 14-ին, քանի որ մեր շարժական տոմարի տարվա սրաց ամսի 25-ից մինչև տարեվերջը (հավելյաց 5-ը) անցնում է հաջորդ՝ 553 թվականին։ Համապատասխանորեն աղյուսակի վերջին տարին սկսվում է 1083 թվականի մարտի 1=նավասարդի 1-ով և ավարտվում 1084 թվականի փետրվարի 28=հավելյաց 5-ով, և չնայած այն բանին, որ տարիների հաշվով աղյուսակն ավարտվում էր 1084 թվականի զատկից ուղիղ մեկ ամիս առաջ, այնուամենայնիվ, Շիրակացին իր աղյուսակը փակում է 1084 թվականի դատկով, որ եղել է մարտի 31=հոռի 2-ին։ Ինչպես ցույց են տալիս այս թվականները, Անանիա Շիրակացին ոչ թե հիմք է դրել որևէ տոմարի, այլ պարզապես կազմել է 532 տարվա զատկի օրերի ցանկ՝ կրոնական ուրիշ տոների հետ միասին՝ հայոց շարժական և հուլյան անշարժ տոմարների զուգադրությամբ, բայց հետագայի մեր պատմիչ-ժամանակագիրներն այդ պարբերաշրջանի սկիզբը դիտել են որպես տարիների հաջորդական թվակարգության հիմք, որպես սկիզբ ընդունելով 552 թվականի հուլիսի 11-ը։ Ըստ էության նույն բանը կատարեց նաև Հովհաննես Իմաստասերը՝ կազմելով անմիջապես հաջորդող 532 տարիների տոնացույցը, բայց դրա համար նա ամենից առաջ հայկական տոմարը դարձրեց կայուն և տարեսկիզբը փետրվարի 29-ից փոխադրեց օգոստոսի 11-ը։ Հենց դրանով էլ նա ոչ միայն լրացրեց 164 օրերի պակասը, այլև մի ամբողջ տարի դեն նետեց՝ իր աղյուսակն սկսելով 1085 թվականի զատկով, որն ընկնում էր ապրիլի 20=հոռի 22=Հովհաննեսի կայուն տոմարի մարերի 14-ին։ Այս մեկ տարվա բացթողումը պատահական չէր, այլ միանգամայն գիտակցաբար դեն նետված տարի, որի մասին Հովհաննես Իմաստասերն սպառիչ տոմարագիտական բացատրություն է տալիս։ Իր տարբեր աշխատություններում, խոսելով տոմարական հաշվումների մեջ առաջացած սխալների և հայոց ու այլ ազգերի անշարժ տոմարների միջև եղած անհամապատասխանությունների մասին, բացատրում է քառամյակների մեկօրյա և դրանից ժամանակի ընթացքում գոյացող մեկ տարվա տարբերությունը, ինչպես, օրինակ, «տ»օնից տեսութիւն յարափոփոխ անցելովք նահանջիւք և հասարակաւորութեանն գնալով, ընդ բոլոր աւուրս տարւոցն ի հարկէ ընդ իւր շրջաբերելով զդրութիւն տօնից խաղացմամբ, ի բոլոր ամին կատարէ ՌՆԿ (1460) ամ», «զի որքան առնու զաւարտ ՌՆԿ (1460) ամքն, լինի դարձեալ թիւ մի յաւելուած, զոր թողուլ պատշաճ է» ...«վասն զի լինի յաւելուած թիւ մի ի ժողովմանէ նահանջիցն յետ

(Ինկ (1450) ամաց, որով այլայլեալ սպականէ կանոնն»[37] և այլն։ Այս մեջբերումները, ինչպես և շատ ուրիշ հատվածներ, որոնց մեջ խոսվում է նահանջից նահանջի մասին, պարզորոշ ցույց են տալիս, որ Հովհաննես Իմաստասերը բաց է թողել հայոց տոմարի մեջ ավելացած մեկ տարին՝ 1461-րդ տարին, հույլյան և հայոց տոմարների տարբերությունը վերացնելու համար, այլ կերպ ասած՝ հույլյան տոմարով 1460 տարվան ճիշտ կերպով համապատասխան է համարել հայոց տոմարի 1461 տարին և այդ մեկ տարին էլ, ահա, դեն է նետել՝ տարբերությունը վերացնելու համար։ Գիտե՞ր, արդյոք, Իմաստասերը, թե որ թվականին է տեղի ունեցել նահանջից նահանջը։ Իր հրատարակված տոմարական աշխատություններում մենք չգտանք այդ թվականի հիշատակությունը, բայց կասկածից վեր է, որ նա իմացել է այդ թվականը և իր աշխատությունների մեջ հիշատակել։ Դրա ապացույցն է հետևյալը։ Հակոբ Ղրիմեցին Գեորգ Իաբունու (Գևորգ Երզնկացու) համար կազմել է Հովհաննես Իմաստասերի տոմարական աշխատությունների համառոտագրություն-մեկնաբանությունը, որի որոշ հատվածներ հրատարակել է Ա. Գ. Աբրահամյանը[38]։ Այդ համառոտագրությունում Հ. Ղրիմեցին գրում է. «Ծանի՛ր ասա, Բաբունի՛ իմ, զի ոչ եթե ոչիմ ջանից ցուցանեմ զքաջութիւն, այլ զՍարկաւագ վարդապետին»[39]։ Մենք հատկապես ընդգծում ենք այս խոստովանությունը, որպեսզի ընթերցողները համոզվեն, որ Հ. Ղրիմեցու ինչպես բոլոր տոմարագիտական բացատրությունները ու հաշվումները, այնպես էլ թվականների մասին եղած տվյալները քաղված են Սարկավագի աշխատություններից, իսկ դա էլ նշանակում է, թե դրանք, իրոք, եղել են նրա աշխատություններում, անկախ այն բանից, մեզ հասած և արդեն հրատարակված աշխատությունների մեջ դրանք կա՞ն, թե ոչ։ Արդ, իր համառոտագրության մեջ Հ. Ղրիմեցին գրում է. «Հարց. Ո՞րպէս կոխեաց հասարակածն զտարեմուտն։ Պատասխանի... Գիտեա, զի տարին ՅԿԵ (365) օր է և նահանջ ամն ՅԿԶ (366), որ է մի օր աւելի, և աւելի օրս թիւ մի յառաջ խաղայուցանէ զհասարակածն ի քանիս ամսոյն։ Արդ՝ ի յահկի ԺԳ-էն ի յաւելեաց ի հինգն հասարակածն հասաւ ՆԾԲ ամն և եկեալ նահանջն ըստ չորից չորից ամաց ի ղոյգ թիւն եղև ՆԾԳ ամն առաջի ամն, որ նահանջի և սկսեալ ի Նաւասարդոյ մինչև ի յաւելեացն ի հինգն և կատարեաց զտարին ՅԿԵ օր, ՅԿԵ օր, մինչև ի չորս ամն նահանջի, որ է ՆԾԶ ամ։ Եւ ավելի ամն օրն նահանջի, այլ ոչ գտեալ տեղի նահանջի ամս, որ էր ՆԾԶ ի հին (տարիս), որպէս յանցեալ ամսն հին տարին, վասն այն ասեմ, զի ամ նահանջի նոր ասի և չորրորդս՝ հին»[40]։ Այս հատվածում «հարցումը» վերաբերում է գիշերահավասարի օրվան, որ 1084 թվականին զուգադիպել էր նավասարդի 21-ին, այսինքն տարեմուտից հետո էր եղել. ահա այդ բանը բացատրելու համար էլ հարց է տրվում, թե ինչպե՞ս է եղել, որ տարեմուտը գիշերահավասարից առաջ է անցել, և պատասխանի մեջ բացատրվում է դա։ Մեզ համար այդ պատասխանի մեջ կարևորը նահանջից նահանջի թվականն է, որ է ՆԾԲ (452) թվականը. «ի յաւելեաց ի հինգն հասարակածն հասաւ ՆԾԲ ամն—գիշերահավասարը հավելյացի 5-ին հասավ 452 թվականին»։ Այս թվականը հայոց Մեծ թվականով է հաշված, ուստի և 452-ին (Մեծ թվականի առաջին տարվան) պետք է գումարենք 551/552, որով կստանանք հույլյան տոմարի 1003/1004 թվականները. գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը, 1003 թվականին համապատասխանում էր հավելյաց ամսի 5-ին, իսկ ամանորը, այսինքն՝ նավասարդի 1-ը՝ մարտի 21-ին։ Հաջորդ, 1004 թվականին, որ նահանջ տարի էր, հավելյաց 5-ը գիշերահավասարից մեկ օրով առաջ է ընկնում (մարտի 19) և նավասարդի 1-ը համընկնում է մարտի 20-ին՝ գարնանային գիշերահավասարի օրվան։ Ինչպես տեսնում ենք, Հ. Ղրիմեցու այս

---

37 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 222, 263, 281։

38 Նույն տեղում, էջ 294—298։

39 Նույն տեղում, էջ 294։

40 Նույն տեղում, էջ 296—297։

տվյալը, որ քաղված է Հովհաննես Իմաստասերի աշխատություններից, ճշգրտորեն համապատասխանում է վերը մեր կատարած հաշվումներին, ըստ որում ուղղակի կերպով շեշտվում է, որ նահանջից նահանջի տարին եղել է ՆԹԲ (552) թվականին, այսինքն՝ 552+552=1004 թվականին։

Ամփոփելով վերը շարադրվածները, հանգում ենք հետևյալին։

1. Հայերի մոտ որպես գարնանային գիշերահավասարի կայուն օր ընդունված է եղել մարտի 20-ը, որը և եղել է հայկական օրացույցի տարեմուտը՝ նավասարդի 1-ը։

2. Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր քառամյակում գոյացող մեկ-օրյա տարբերությունը մեր շարժական և հուլյան տոմարի տարիների միջև՝ հայոց նավասարդի 1-ը անընդհատորեն առաջ է շարժել, և միայն 1004 թվականին՝ 1460 տարվա շրջանը (Հայկյան շրջանը) լրանալուց հետո, կրկին նավասարդի 1-ը համընկել է մարտի 20-ին։

3. Քանի որ 1460-ամյա պարբերաշրջանը լրացել է 1004 թվականին, ապա ինքնին արդեն պարզ է, որ Հայկյան շրջանի սկիզբը եղել է դրանից 1460 տարի առաջ, այն է՝ մ. թ. ա. 457 թվականին։ Այս թվականն էլ մենք ընդունում ենք որպես հայոց Բուն թվականի սկիզբ, ըստ որում դա պատմականորեն նույնպես արդարացվում է այն փաստով, որ մ. թ. ա. V դարում արդեն գոյություն ուներ հայկական պետականություն՝ Երվանդունիների ստեղծած պետությունը, թեև արդեն ենթարկված աքեմենյաններին։

4. Մ. թ. ա. 457 թվականն ընդունելով որպես Բուն թվականի սկիզբ, գրտնում ենք, որ այդ շարժական տոմարն անընդհատորեն գործադրվել է մինչև Մեծ թվականով ժամանակագրության սկիզբը, թեև այդ թվականի օրացուցային համակարգը եղել է Բուն թվականինը։ Դա նշանակում է, թե Մեծ թվականն էլ, ըստ էության, ուղղակի շարունակությունն է Բուն թվականի, չնայած այն բանին, որ այդ տոմարով տարիների հաջորդական թվակարգությունն սկսվում է հուլյան 552 թվականով։

5. Կարելի է, անշուշտ, Բուն տոմարի մեր նշած առաջին թվականից մեկ շրջան ևս ետ գնալ, որով կհասնենք մ. թ. ա. 1917 թվականին, գրեթե երկրորդ հազարամյակի սկզբին, բայց այդ դեպքում, արդեն, կունենանք ոչ թե իրոք հայկական թվականություն, այլ Հայաստանում գործածված թվականություն՝ նույն արեգակնային օրացուցային համակարգով, որը և շարունակել են հայերը։ Այս ենթադրությունը մերժելու որևէ հիմք չունենք, թեև հաստատելը նույնպես դյուրին չէ։

НАЧАЛО «ИСКОННОГО АРМЯНСКОГО КАЛЕНДАРЯ» И ГАЙКАНСКИЕ ПЕРИОДЫ

ЭДУАРД АГАЯН

Академик АН Армянской ССР

Резюме

Армянский народ с давних времен использовал свой собственный солнечный календарь. Согласно этому календарю, год был разделен на 12 тридцатидневных месяцев и добавочный пятидневный «месяц», называемый *авелеац* (добавочный), всего 365 дней. Разница почти в 1/4 дня между 365-дневным и астрономическим годом приводила за четыре года к разнице в один день. Это продвижение и дало название календарю—«подвижный календарь».

Армяне, как и многие народы древности, имея достаточно универсальный календарь, не вели счет времени—летосчисление. Именно поэтому начало возникновения «Исконного армянского календаря» оста-

валось неизвестным. Многие арменоведы занимались выяснением этого вопроса; были выдвинуты различные версии, которые мы отвергаем.

При разрешении этого вопроса мы основываемся на дне новогодия у армян (первый день армянского года). Как древнеармянские источники, так и исследования ряда арменоведов подтверждают, что новогодие у армян было в день весеннего равноденствия—20 марта. Исходя из этого, мы принимаем за ориентир совпадение 1 числа месяца навасард с 20 марта по юлианскому календарю (по «старому стилю»). Согласно имеющимся сопоставительным таблицам армянского и юлианского календарей, такое совпадение было в 1004 г. н. э. Это число и мы принимаем как год апокатастаса, т. е. как год истечения 1460-летнего периода,— эры сотиса, которую армяне называют Гайканской эрой,—и начало новой 1460-летней эры. Отняв от 1460 г. 1004 г. (до марта), получаем 457, т. е. март, 457 г. до н. э., который мы и считаем начальным годом «Исконного армянского календаря».